ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀԱ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

ք. Երևան **12 փետրվարի 2019թ.**

Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Սաքեյան

Հանձնաժողովի անդամներ՝ Բ. Մաթևոսյան, Ա. Մարկոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Մարգարյան

Օրակարգ

հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

1. «ՀԱ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ 08.02.2019թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված "Էլեկտրոնային աճուրդի իրականացման" կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման վերաբերյալ եզրակացություն է ստացվել, համաձայն որի՝ «ՄԱՔՍՕԻԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտարարությունները համարվել է իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված "Էլեկտրոնային աճուրդի իրականացման" կարգի 22-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղը զբաղեցնող ճանաչված «ՄԱՔՍՕԻԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը, գնահատող հանձնաժողովի նախագահ Հ. Սաքեյանը ներկայացրեց հանձնաժողովի անդամների կողմից իրականացված հայտերի հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները: Համաձայն որի՝

   1. «ՀԱ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով՝ «ՄԱՔՍՕԻԼ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից և ներկայացնել առաջարկ ընտրված մասնակցներին՝ պայմանագիր կնքելու համար:
   2. Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
   3. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	**Հ. Սաքեյան**
Հանձնաժողովի անդամներ՝	**Բ. Մաթևոսյան**
	Ա. Մարկոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝	**Տ. Մարգարյան**